ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/7-Լ) ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 13.06.2019 թվականի թիվ 363/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 26.06.2019 թ. ժամը 11:00-ին, ՀՀ պետական եկամուտների վարչական շենքում, ք. Երևան, Մ. Խորենացու 3,7:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ղարիբջանյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Մ. Դուրգարյանը, Հ. Վանյանը, Տ. Պետրոսյանը, Մ. Կարապետյանը, քարտուղար Լ. Հարությունյանը, Սելենա-Սերվիս ՀՁ ՍՊԸ-ի լիազորված անձ Տաթև Խաչատուրյանը

<u>Գների նվազեցման նպատակով բանակցությունների անցկացման մասին</u>

ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/7-Լ) ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա. Ղարիբջանյանը տեղեկացրեց, որ հանձնաժողովը ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/7-Լ) ծածկագրով գնման հրավերի 7.7 կետի համաձայն գնանշման հարցման ընթացակարգի համար գների նվազեցման նպատակով բանակցություններին մասնակցելու համար գնային առաջարկ ներկայացրած և հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին 21.06.2019թ. Armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով հրավիրել էր 26.06.2019 թ. 11:00-ին մասնակցելու բանակցություններին:

26.06.2019 թ. 11:00-ի դրությամբ բանակցություններին մասնակցում էր Սելենա-Սերվիս ՀՁ ՍՊԸ-ի լիազորված անձ Տաթև Խաչատուրյանը:

Գնահատող հանձնաժողովը բանակցությունների համար մասնակցին տրամադրեց 20 րոպե: Մասնակիցը իր ներկայացրած գինը իջեցրեց 2 000 000 դրամի՝ նախահաշվով սահմանված գնին հավասար:

<u>Գնահատող հանձնաժողովը որոշեց՝</u>

1. Սելենա-Սերվիս ՀՁ ՍՊԸ -ին ճանաչել ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից:
2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների տվյալները՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով:
3. Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Ղարիբջանյան

անդամներ՝ _____ Մ. Դուրգարյան

_____ Հ. Վանյան

_____ Տ. Պետրոսյան

_____ Մ. Կարապետյան

քարտուղար՝ _____ Լ. Հարությունյան